



ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԷԶՄԻԱԾՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ 1000-ԱՄՅԱԿԻՆ

Ձեռագիրը նյութական և հոգևոր հուշարձան է, որն առանձնանում է ոչ միայն որոշակի բովանդակությամբ, այլև գրանչությամբ, գրությամբ, զարդարվածությամբ, կազմով, ստեղծման հանգամանքներով: Ձեռագիրն ամեն մի ժողովրդի ամենաթանկագին հուշարձանն է համարվում, քանի որ այն իր մեջ ամփոփում է անցալի քաղաքակրթության ամեն շատ տարրեր: Այս առումով ցատուն օրինակ է Էջմիածնի Ավետարանը, որը կոչվում է նաև «փղոսկրյա կազմով ավետարան»:

Ավետարանը ընդօրինակվել է Սյունյաց մատրոպոլիտության նստավայր Տաթևի վանքի վերակառուցումից հետո (906 թ.), երանից քիչ հեռու հիմնադրված Նորավանքում, 989 թվականին: Եկեղեցու հիմնադիրը Հայկազուն իշխանների ժառանգ Ստեփանոս կրոնավորն էր, իսկ ձեռագրի ստացողը նրա եղբորորդի Ստեփանոսը, որը ղեկավարում էր տեղի դպրոցը: Հենց դպրոցի համար էլ հանձնարարում է Հովհաննես գրչին օրինակելու սույն Ավետարանը:

Ավետարանն ունի 29,5×24,6 սմ մագաղաթյա 227 թերթ, որի սկզբի պրակը նկարազարդ է, կատարված գրչության ժամանակ: Ծաղկողի անունն անհայտ է: Վերջում Ավետարանն ունի Տոնացույց, որը մեզ հայտնի ամենահինն է: Ձեռագիրը գրված է երկաթագրով, իսկ Ավետարանացույցը՝ խառը գրությամբ:

12-րդ դարում Ավետարանը նվիրվել է Ծամբիձորի Ս. Ստեփանոս եկեղեցուն: Այդ ժամանակ նորոգվել է և կազմվել VI դա-

րում պատրաստված փղոսկրյա կազմով և ավելացվել նույն դարից զուգ էջերը նկարազարդված մագաղաթյա երկու թերթերով:

Փղոսկրյա կազմով Ավետարանը Ներսես Աշտարակեցի Կաթողիկոսի կոնդակով, 1847 թ. տեղափոխվում է Էջմիածին, Մայր Աթոռի Մատենադարան:

Այստեղից էլ նրա «Էջմիածնի ավետարան» անունը: Այդ ժամանակներից էլ ձեռագիրը դառնում է գիտական ուսումնասիրության առարկա: Գրվում են առանձին հոդվածներ, ամբողջական գիրք-ուսումնասիրություն է նվիրում նրան Ստրժիկովսկին:

Ահա այս ձեռագրի հազարամյակին էր նվիրված Մաշտոցի անվան Մատենադարանի հերթական գիտական նստաշրջանը: Ներածական խոսքով նիստը բացեց Մատենադարանի տնօրեն Ս. Ս. Արևշատյանը: Նա իր խոսքում ընդհանուր գծով շարադրեց Ավետարանի մանրանկարների առանձնահատկությունները, նշեց գրավոր մշակույթում և արվեստի մեջ նրա զբաղեցրած տեղը:

«Էջմիածնի Ավետարանի տեղը հայ մշակույթի մեջ» գեկուցմամբ հանդես եկավ արվեստագիտության թեկնածու Լ. Զաքարյանը: Նա մանրամասնորեն ներկայացրեց Ավետարանը, այն դիտելով որպես կարևոր հուշարձան, որն իր ոճաին և գաղափարական ուղղվածությամբ կանխորոշիչ եղավ հայ մանրանկարչական արվեստի հետագա զարգացման համար: Այս ձեռագրի մաս կազմող երկու 7-րդ դարի

և 10-րդ դարի պատկանող մանրանկարների տեսարակներից յուրաքանչյուրը իրենց ոճական ուրույն առանձնահատկություներով հանդերձ իրենց բնորոշ աղբյուրներում են և նույն դարի հայ քանդակագործության և մանրանկարչության երկու՝ հարթանկարային և ծավալային ուղղությունների հետ։ Այս երկու տեսարակների մանրանկարային շարքերի պատկերագրական ծրագրերի ասորոշությունում արծարծված են միևնույն Աստվածահայտնության և մեղքերի քաղության գաղափարը, որն հայ միջնադարյան արվեստի հետքն է հանդիսանում։

Հաջորդ գեկուցումը նվիրված էր Էջմիածնի Ավետարանի պատկերապնության և գրքարվեստի հարցերին («Էջմիածնի Ավետարանը. պատկերաբանության և գրքարվեստի հարցեր»։ Զեկուցողներ արվեստագիտության թեկնածու Վ. Ղազարյան, Ս. Մանուկյան)։ Հեղինակները ներկայացրին ձեռագրի տարբեր ժամանակների բաղկացուցիչ մասերը (փղուկը, կազմը, Ավետարանի վերջում կցված մանրանկարները)։ Նրանք հատկապես ուշադրության արժանացրին Ավետարանի պատկերաբանությանը, քննելով դրանք Լեոնիդոս Սյունեցու մեկնությունների էտնափորքի վրա (կամարներ, սյուներ, թռչուններ բույսեր, գույներ)։

Մեկ այլ ձեռագրի նկարագրողման ուրույն ոճին էր նվիրված արվեստագիտության թեկնածու Ա. Գևորգյանի գեկուցումը («Աղուտի Ավետարան, 1296»)։ Սույն ձեռագիրը գրչության աչք կենտրոնից մեզ հասած միակ օրինակն է։ Ձեռագրում ոչ մի հիշատակություն չկա նրա ծաղկողի մասին։ Հեղինակի համոզիչ փաստարկներով, ձեռագրի նկարիչը գրիչ Մխիթարն է։ Ավետարանի նկարագրողումը մոնումենտալ դեկորատիվ ոճավորում ունի, ինքնատիպ նկարներով։ Խորանների նկարագրողումը բնորոշ է 10—12-րդ դարերին, և հար և նման է ԱՄՆ-ի Մորգանի գրադարանում պահվող պատուհիկ մանրանկարներին։ Տեղից ստացված լուսապատկերների և լուսանկարների համադրումով գեկուցողը գտավ, որ դրանք պատկանում են Աղուտի ձեռագրին, ամբողջացնելով Ավետարանի մանրանկարները և ճշտելով դրանց կատարման ժամանակը՝ 1296 թ.։

Հետաքրքրական էր պատմական գիտությունների դոկտոր Հ. Փափազյանի գեկուցումը՝ «Միզա-Յուսուֆ Ներսեսույի «Թարիխ և Սաֆին» որպես Արցախի 18—19-րդ դդ. պատմության սկզբնաղբյուր» թեմայով։ 1804—1809 թթ. ռուս-իրանական

պատերազմի տարիներին Արցախից քշված հայ գեղիների մեջ է եղել մի պատանի, որն Իրանում մահմեդականացվել է Յուսուֆ անունով։ Մեծացել է ազնվական ընտանիքում, քաջ տիրապետել պարսկերենին և պարսկական մատենագիտությանը։ 1828 թ. Թուրքմենչայի հաշտությունից հետո ի թիվս այլ հայ գաղթականների վերադարձել է Արցախ, ընդունել իր ժողովրդի հավատը, նոր անունով կոչվել Միրզա Յուսուֆ Ներսեսույ (գրական անունը՝ Ղարաբաղցի)։ Կարճ ժամանակում տիրապետել է մայրենի լեզվին, ուսումնասիրել գրաբար, սովորել նաև ռուսերեն և մտել ծառայության մեջ՝ նահանգապետարանում, շարունակելով ստեղծագործել պարսկերեն։ Բացի գրական գրոծերից ևս թողել է նաև պարսից պատմության ավանդություններով ստեղծված պատմական մի երկասիրություն, որ հանգամանորեն շարադրված է Արցախի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 1850-ական թվականները։ Առանձնակի արժեքավոր է Արցախի մեղիքությունների 18—19-րդ դարերի քաղաքական իրադրությունների, տնտեսական կյանքի առանձին մանրամասների մասին, որպես ականատեսի նրա հաղորդած տեղեկությունները։ Զեկուցողը համառոտ հաղորդման ընթացքում վեր հանեց աշխատասիրության աղբյուրագիտական արժանիքները, միաժամանակ նշելով, որ Մատենադարանի թեմատիկ պլանով նախատեսված է կազմել այս ձեռագրի գիտական բնագիրը, հայերեն, ռուսերեն թարգմանությամբ այն մատչելի դարձնելու համար, ոչ միայն հայագիտական, այլև ավելի լայն արևելագիտական շրջանների համար։

Թաթերի ծագման էթնոգենեզին է վերաբերում պատմական գիտությունների դոկտոր Վ. Գրիգորյանի արդիական հրնչելություն ունեցող գեկուցումը։ Թաթերն իրանական ժողովուրդներ են, լեզուն պատկանում է լեզուների հնդկարոպական ընտանիքի իրանական ճյուղին՝ նոր պարսկերենի բարբառներից մեկն է։ Թաթերը ապրում են Ադրբեջանի տարածքում, նրա վեց շրջաններում՝ Ապշերոնում, Ղուրայի ծովափնյա շրջանում, մնացածները՝ Դաղըստանում։ Թաթ անվան ծագումը թրքական է, այնպես թուրքերը անվանել են այն անձանց, որոնք թուրքերեն չեն խոսել։ Հետագայում այդ անունը դարձել է այստեղ բնակվող պարսիկ ժողովրդի էթնիկական միավորումը՝ արտահայտող տերմին։

Ըստ 1926 թ. մարդահամարի թաթերը 28,443 էին, իսկ Ադրբեջանցիները առանց Նախիջևանի՝ 1241758։ Վերջիններս հի-

մա բավական բազմացել են և իրենց ասելով կազմում են 7 միլիոն: Թաթերը 1979 թ. տվյալներով 8,800 հոգի են, թեև թաթերն էլ ադրբեջանցիների նման ապրում են նույն պայմաններում, նրանք էլ մահմեդականներ են, բազմազավակության կողմնակիցներ, արդյունքում շատանալու փոխարեն, նրանց անը խիստ նվազել է: «Վատնաոր. ադրբեջանցիների սեջ բունն է «կամավոր և բնական եղանակով» ձուլել քրդերի և թալիշների հետ մասն թաթերին: Այդ բոլորը նրանք ամրապնդում են մասն «գիտականորեն»: Գ. Կուլիևը, Լ. Գոյունբերգը փորձում են ապացուցել, թե իբր գիր և մշակույթ չունեցող պարսիկ այս ժողովրդի միակ «երջանկությունը» միայն ու սիայն թուրքաբանում մեջ է: Սակայն իրականությունը այն է, որ թաթերը չեն ձուլվում, կա՛ն և ապրում են իրենց պատմական տարածքի վրա, պահում են իրենց սովորությունները և շատ բանով տարբերվում են իրենց թուրքալեզու հարևանից, գիտեն և չեն մոռացել իրենց մայրենին՝ պարսկերենը:

Թոնդրակյան շարժման Գրիգոր Նարեկացու գնահատմանն էր նվիրված բանասիրական գիտությունների դոկտոր Շ. Նազարյանի զեկուցումը: Համառոտակի խոսելով թոնդրակյան շարժման էության, նրան տրված տարբեր գնահատականներին, զեկուցողը հիմնական շեշտը դրեց 18-րդ դարի մարեկացիագետների հայեցակետի վրա և բաղդատության մեջ դնելով Հ. Նալյանի Նարեկի մեկնության և բուն Մատյան ողբերգության դավանաբանական բնույթի բանքերը միաժամանակ Կնավալանքի առաջնորդին ուղղված նրա Թղթի 14 կետերի քննության վրա, հեղինակը եկավ այն եզրահանգման, որ Նարեկացուն խորթ է ամեն սի աղանդ, որ խարխում է Հայ Առաքելական Եկեղեցու հիմքերը, քանի որ Եկեղեցուց է ճայթում հավատի, հույսի և միասնության ճառագայթները:

Հետաքրքիր էր պատմական գիտությունների թեկնածու Ա. Մաթևոսյանի զեկուցումը. «Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի երկու հատվածի վերատեղադրումը» թեմայով: Դեռ Ն. Ակինյանը շուրջ 50 տարի առաջ կարծիք էր հայտնել, որ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկում Դանիելյան գրերի Հայաստան բերելուց հետո ընկած հատվածը վերաբերում է ոչ թե այդ գրերի, այլ Մաշտոցյան գրերի փորձարկմանը: 1949 թ. մա Կորյունի գիրքը հրատարակել էր, այդ հատվածի տեղափոխությանը: Միջագետքից Վաղարշապատ վերադառնա-

լուն հաջորդող հատվածը (Մարերի կողմերը լուսավորելու մասին) տեղափոխելով Սղվանից գրերին նվիրված մասում, նրա տեղը սուծել է խնդրո առարկա հատվածը: Ակինյանի առաջարկությունը բանասիրությունը մերժել է: Ա. Մաթևոսյանը ոչ սիայն բանասիրական լրացուցիչ փաստարկումներով հաստատում է Ն. Ակինյանի տեսակետի ճշմարտացիությունը, այլև հնագրական և ձեռագրագիտության ընձեռած հնարավորություններով վերստեղծում է Կորյունի երկի մակետը: Ավելին, մա Ն. Ակինյանի կողմից ոչ ճիշտ տեղադրված երկրորդ հատվածի տեղն է ճշտում:

Կորյունի երկի այս երկու հատվածները զեկուցողի կարծիքով եղել են իրար կից թերթեր, կազմելով հեղինակի ձեռագրի 5-րդ պրակի առաջին թուղթ: Կազմելիս կազմարարը շփոթել է այն, տեղադրելով որպես մախորդ՝ 4-րդ պրակի առաջին թուղթ: Արդյունքում՝ այդ պրակը դարձել է 14 թերթանոց, մինչդեռ նրան մախորդած բոլոր պրակները 12 թերթանոց են, իսկ նրանից հետո եկողը՝ 5-րդ պրակը՝ 10 թերթանոց: Եթե 4-րդ պրակի առաջին էջը տանենք 5-րդ պրակին, որպես առաջին թերթ, երկուսն էլ դառնում են 12-ական, ինչպես պահանջում է գրչության արվեստի կանոնը: Կանոնավորվում է Կորյունի ձեռագիրը՝ հատվածներից առաջինը տեղավորվում է Մաշտոցյան գիրը Հայաստան բերելուց հետո և մախորդում հայ դպրության ծավալմանը, երկրորդ հատվածը՝ տեղ է գտնում Գողթան գավառից հետո, երբ Մեսրոպը մարերի կողմերն է լուսավորում և ապա անցնում Սյունիք, այսինքն սրանով հաստատվում է բանասիրական քննությանը կատարված տեղադրումները:

Տեղափոխումը լուծում է Դանիելյան գրերի 1500-ամյա ստեղծվածը՝ Վոսմշապուհի հինգերորդ տարում Դանիելյան գրերը Հայաստան են բերվում և մերժվում: Այդ նույն տարում Մաշտոցը գնում է Միջագետք և ստեղծում հառց գիրը ու հաջորդ տարում վերադառնում Հայաստան: Այստեղ Սահակը և Մեսրոպը Վաղարշապատում Մաշտոցյան գրերով դարոցներ են բաց անում, ուր Մաշտոցը երկու տարի դաւ է տալիս և ստանում վարդապետական աստիճան: Սույն փոփոխությունները լուծում են մասն հայ գրերի հետ կապված ալ հարցեր: «Ինչպես բացահայտել հեղինակի խոսքը» զեկուցումը համոզեւ եկավ բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Աբգարյանը: Ինչպես հայտնի է, մեր մատենագիրների երկերը դարերի ընթացքում անընդհատ արտագրվելով ենթարկ-

վել են փոփոխության: Եվ հեղինակային նախնական օրինակը միևնույն երկի տարբեր ընդօրինակության առկայության դեպքում հեշտ է համեմատական ուսումնասիրությանը վերականգնել: Այլ է և դժվար մեկ ձեռագրով մեզ հասած ընդօրինակության հեղինակային խոսքի բացահայտումը և վերականգնումը: Զեկուցողը նշեց այն սիջոցները որոնց օժանդակությամբ հնարավոր է գտնել ձեռագրական կրիպակները և ուղղել աղճատված բնագիրը:

Հայ սիջնադարյան պոետիկայի մի քանի հարցերի մասին խոսեց բանասիրական գիտությունների թեկնածու Հ. Թամրազյանը: Անդրադառնալով Նարեկյան դպրոցի ձևավորման առաջին պարբերաշրջանին, խոսքով Անձևացու ստեղծագործությանը, որի մեկնությունները ուսումնական-կրթական ձեռնարկ են հանդիսացել դպրոցի ներկայացուցիչների համար: Դրանք վերաբերում են կրոնական աղոթքներին և հոգևոր երգերին ու քննության են առնում հոգևոր արվեստի տեսության բազմաթիվ խնդիրներ: Զեկուցման մեջ վեր են հանվում խոսքով Անձևացու և Նարեկյան դպրոցի մյուս ներկայացուցիչների՝ Անանիա Նարեկացու և Գրիգոր Նարեկացու ստեղծագործական սերտ աղերսները և փոխառնությունները: «Խորհրդանշանը Հովհանն Օձնեցու մատենագրության մեջ» հետաքրքիր զեկուցմամբ հանդես եկավ բանասիրական գիտությունների թեկնածու Հ. Քյուսեյանը: Զեկուցողը մանրամասն խոսեց Ց-րդ դարի նշանավոր կաթողիկոս և մատենագիր Հովհան Օձնեցու երկերում հանրապի հանդիպող խորհրդանշանի տեսական արծարծումների մասին: Նա վերլուծեց կերպերի, ճարտարապետության և գունային խորհրդանշանի տեսական առանձնահատկությունները, վեր հանելով դրանց աստվածաբանական ակունքները:

Խորհրդանշանների քննությանն էր նվիրված նաև Ն. Մանուկյանի «Բարդուղիմեոս Մարաղացու Քարոզգրքի առակների և գրույցների սիմվոլիկան» զեկուցումը: Հեղինակը հանգամանորեն խոսեց Քարոզգրքի մասին, որի բոլոր բնաբանները Աստվածաշնչից են վերցված և խորհրդանշորեն արտահայտում են յուրաքանչյուր քարոզի բովանդակությունը: Եկեղեցական խորհրդանշանները ի հայտ են գալիս բնա-

բանի, առակի, ճառերի, մենախոսությունների ձևով: Մարաղացու առակների բնաբանը առակի խորհրդանշան է, իսկ առակը՝ այդ խորհրդանշանի մեկնաբանությունը: Նրա առակները պարունակում են միջնադարյան սխոլաստների էզոտերիկ և էզոտերիկ խորհրդանշանների մեկնաբանություն: Այդպիսի խորհրդանշանները մերժվում էին Հայ Եկեղեցու կողմից, այս իմաստով ունենալով ճանաչողական նշանակություն:

Սեբաստացի բժիշկների մի ճյուղ ընտանիքի Մեսեյան-Սեբաստացիների արժեքավոր բժշկարանին էր նվիրված բժշկական գիտությունների թեկնածու Դ. Կարապետյանի հաղորդումը: Բժշկարանը գրել է տոհմի նախնին՝ Հակոբ վարդապետ Մեսեյանը՝ 17-րդ դարում, ապա լրացվել է նրա ժառանգների՝ Մաթոսաղա, Աստվածատուր, Եղիազար, Մատթեոս և Սաղաթել սեբաստացիների կողմից: Ծավալուն այս ժողովածուն առավելապես վերաբերում է գործնական կիրառական բժշկությանը և ժամանակին ծառայել է որպես ուսումնական ձեռնարկ ապագա բժիշկների համար և որպես բժշկարան գործնական բժշկությամբ զբաղվողների համար:

Ա. Ղազարոսյանը «Հայերեն ձեռագրերի հիշատակարանները պատմաճարտարապետական հուշարձանների ուսումնասիրության աղբյուր» զեկուցման մեջ ցույց տվեց, որ հայերեն ձեռագրերում բազմաթիվ վկայություններ կան հայկական պատմաճարտարապետական և պատմամշակութային հուշարձանների կառուցման, նորոգման, ինչպես նաև բնական աղետներից ու ներխուժումներից ավերված հուշարձանների մասին, գրված ականատեսների կողմից, որոնք հավաստի են և լրացնում են մատենագրական և փմագրական տեղեկություններին, ճշտում նրանց տեղեկությունները կամ ներկայանում որպես եզակի փաստեր:

Նստաշրջանում ելույթներ ունեցան նաև արվեստագիտության դոկտոր Ն. Թահմիզյանը («Միջին քարձրության երրորդ կարգի խազագրությունների վերծանություն») և պատմական գիտությունների թեկնածու Ա. Սահակյանը («Երկրաշարժի ըմբռնումը հին Հայաստանում»):

Ա. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ